Հավելված
ՀՀ կառավարության 2009 թվականի
մայիսի 7-ի N 547 - Ն որոշման

Կ Ա Ր Գ

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ ԱՌԱՋԻՆ ԵՐԴՄԱՆ ԱՐԱՐՈՂՈՒԹՅԱՆ

1. Նորընտիր Երևանի քաղաքապետի առաջին երդման արարողության նպատակով՝ Երևանի քաղաքապետի ընտրվելուց հետո երրորդ օրացուցային օրը, ժամը 11.00-ին օրենքի ուժով հրավիրվում է Երևանի ավագանու նիստ: Նիստը տեղի է ունենում Երևանի ավագանու նստավայրում՝ Երևան քաղաքի Արգիշտիի 1 հասցեում:

2. Երևանի քաղաքապետի առաջին երդման արարողության նախապատրաստման և անցկացման կազմակերպման պատասխանատուն «Երևանի քաղաքապետարանի աշխատակազմ» պետական կառավարչական հիմնարկն է (այսուհետ՝ աշխատակազմ):

3. Աշխատակազմը ժամը 10.00 - 11.00-ն գրանցում է ավագանու անդամներին:

4. Ավագանու նիստն իրավազոր է, եթե նիստին ներկա է առնվազն ավագանու 33 անդամ: Եթե կես ժամվա ընթացքում չի ապահովվում նիստի իրավազորությունը, ապա ավագանու նիստ է գումարվում հաջորդ օրը, ժամը 11.00-ին:

5. Նիստը վարում է ավագանու նիստին ներկա՝ տարիքով ավագ անդամը:

6. Նիստը վարողը հայտարարում է նիստի օրակարգը՝ Երևանի քաղաքապետի երդում:

7. Նիստին ներկա են գտնվում Հայաստանի Հանրապետության փոխվարչապետ, Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման նախարարը, Հայ Առաքելական եկեղեցու Արարատյան Հայրապետական թեմի առաջնորդը (համաձայնությամբ), հրավիրված պետական, եկեղեցական, մշակութային և հասարակական գործիչները:

8. Նիստը վարողն ընտրված քաղաքապետին հրավիրում է ամբիոնի մոտ: Ամբիոնին մոտենալուց հետո՝ ընտրված քաղաքապետն արտասանում է երդման տեքստը.

«Ստանձնելով Հայաստանի Հանրապետության մայրաքաղաք Երևանի քաղաքապետի պաշտոնը՝ երդվում եմ.

Երևանի քաղաքապետի լիազորություններն իրականացնելու ընթացքում պահպանել Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունը, օրենքները, Երևանի ավագանու որոշումները, ազնվորեն և բարեխղճորեն կատարել Երևանի քաղաքապետի լիազորությունները, ծառայել Երևանի բարգավաճմանը, գործել ի բարօրություն նրա բնակիչների։

Պարտավորվում եմ հոգ տանել մեր հնագույն մայրաքաղաքի փառքի պահպանման և բազմապատկման համար, պաշտպանել համայնքի իրավունքները, օրինական շահերը և սեփականությունը, ուժերիս անմնացորդ նվիրումով սատարել ժողովրդի հավատին, նպաստել նրա նյութական և հոգևոր վերելքին։

Աջակից լինել ամեն մի ազնիվ նախաձեռնության, որը միտված կլինի իմ համաքաղաքացիների նվիրական գաղափարների իրականացմանը։»։

9. Երդումն արտասանելուց հետո հնչում է Երևան քաղաքի օրհներգը։ Երևանի քաղաքապետն ստորագրում է երդման տեքստի տակ, որն ի պահ է հանձնվում Երևան քաղաքի թանգարան։

10. Երդման տեքստն ստորագրվելուց հետո՝ նիստը վարողը ելույթի համար ձայնը տալիս է Երևանի քաղաքապետին։

11. Ելույթի համար տրվում է մինչև 20 րոպե ժամանակ։

12. Ելույթից հետո Երևանի քաղաքապետն զբաղեցնում է նախագահողի տեղը և շարունակում վարել նիստը։

13. Ողջույնի խոսքերով կարող են հանդես գալ Հայաստանի Հանրապետության փոխվարչապետ, Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման նախարարը, Հայ Առաքելական եկեղեցու Արարատյան Հայրապետական թեմի առաջնորդը, ինչպես նաև կարող են հրապարակվել ուղերձներ։

14. Ողջույնի խոսքերից և ուղերձների հրապարակումից հետո Երևանի քաղաքապետը հայտարարում է նիստը փակված։

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ Դ. ՍԱՐԳՍՅԱՆ